

ԼԱ ԳԱՆԻԱՏԱՅԻ ԵՒ ՔՐԵՍԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ
ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՐԱՐԱՏ ՏՈՒՆ
Միշըն Հիլզ, Գալիֆորնիա

Շաբաթ, Փետրուար 27-ին 2010, առաւօտեան ժամը 11:00-ին, Լա Գանիատայի եւ Քրետենթա Հովիտի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Տիկնանց Միութիւնը՝ (*ատենապետուհի՝ Տիկին Լենա Սիմոնեան, Տիկին Տիանա Եթերեան, Տիկին Մարինէ Գրիգորեան եւ Տիկին Սելինէ Տէր-Օզանտեան*), Կիրակնօրեայ եւ Շաբաթօրեայ Վարժարաններու աշակերտները եւ ուսուցչուհիները՝ (*Տնօրէնուհի՝ Օր. Աղաւնի Աշրգեան, Տիկին Մէլի Բարսեղեան, Տիկին Սօսի Կարապետեան, Տնօրէնուհի՝ Տիկին Քաղցրիկ Մանուկեան եւ Տիկին Անուշ Աղպալեան*), առաջնորդութեամբ Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ.Յովսէփ Աւագ Քհնյ. Յակոբեանի եւ Բրշ. Վարազդատ Սրկ. Բարսեղեանի, այցելութիւն տուին Արարատ Տուն: Ներկայ էին նաեւ քանի մը ծնողներ:

Արարատ Տան երկու բաժիններուն մէջ ալ երախաները մայրենի լեզուի ու Հայրենիքի նուիրուած իրենց արտասանութիւններով եւ հոգեւոր երգերով ցնծութիւն եւ ուրախութիւն պատճառեցին մեր հայրիկներուն եւ մայրիկներուն: Ներկաները ոգեւորուած այս մթնոլորտէն խնդրեցին որ յաճախ կազմակերպուին այսպիսի այցելութիւններ, որովհետեւ կարօտը ունին տեսնելու իրենց զաւակները եւ հարազատները: Պահը շատ յուզիչ էր: Տէր Հայրը ներկայացուց Տիկնանց Միութեան անդամները եւ ուսուցչուհիները: Ատենապետուհի Լենա Սիմոնեան մեր հայրիկներուն եւ մայրիկներուն մաղթեց քաջամոռոջութիւն եւ Լա Գանիատայի Ծուխի անունով \$300 տոլարի գումար մը նուիրեց այդ օրուան ճաշին համար: Երախաները Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետի «Հաւատով Խոստովանիմ» աղօթագիրքեր նուիրեցին մեր հայրիկներուն եւ մայրիկներուն: Միասին երգուած «Հայր մեր» Տէրունական աղօթքով աւարտեցաւ այս այցելութիւնը: